լու։ Երկրորդ՝ յոյս ունեցած լինի թէ Յուսուփ Ալաշ-
կերտի դաշտից շուտ ետ կը դառնայ, առ այս Պատու-
ռայ Թէքքայ-Բինէ բարձրանալու խիստ դժուարու-
թիւնը յանձն չառաւ։

Երրորդ՝ կերևի որ մտադիր էր ուրիշ կողմեր փո-
խադրուել, որով յարմար ճանապարհ ի վերայ հաստատ-
ուեցաւ։

«Յուսուփ հանդերձ Գագկաւ խաղաց ի վերայ Սմ-
բատայ, հանդերձ Գագկաւ և Գուրգենաւ և եկեալ
պաշարեաց զամրոցն Կապուտայ, յորում նստէր Սմբատ
սակաւ զօրօք»։

«Եւ իբրև անցին աւուրք երկու զօրօք նորա առ
հասարակ սկսան ահագին իմն թնդմամբ ձայնի նետա-
ձգութեանց և քարաձգութեանց զաղմուկ շփոթի յու-
զել զպարսպաւ, որպէս թէ կամիցին կլանել զնա։ Իսկ
ոչք ի ներքս էին ամրոցին, անդ ոչինչ շփոթեցան, այլ
կարգեցեալ ի մէջ իւրեանց՝ յառաջոյ կացուցին զայնո-
սիկ որ կորովին էին, ի նետաձգութիւնս և քաջաբա-
զուկս ի պարսպաքարել և զայլսն կարգեցին զկնի
կան նոցա և ապա իւրաքանչիւր ի նոցանէ անվրէպ
կշռութեամբ արձակել զնետս և զքարինս ի յանդիմա-
նակացս իւրեանց, անդէն առ ետեղ սատակէին և զմի-
մեամբ արկանէին, և այնչափ սաստիկ եղև կոտորած
նոցա, մինչև դիականց անկելոցն իբրև բլուր բարձրա-
նալ առ ամրոցաւն»։

Դրսից այս ամրոցին վնաս տալ անկարելի է, կե-
րևի Սմբատ Յուսուփայ առաջ քշած հայ զօրաց կո-
տորածը և ներսիններուն սովամահ լինելն զինք սար-
սեցին անձնատուր լինել։

Կապուտայ վերայ այսչափ։